

Կարեն Խաչատրյան, Համո Սուքիասյան

ՀԱՅ-ՎՐԱՅԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ-ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐԱՆ ԳՈՐԾՈՂԹԱՑԸ 1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ¹

Բանալի բառեր - Տարածք, սահման, հանձնաժողով, բանակցություններ, համաձայնագիր, պյուտ, գավառ, շրջան, Լոռի, Զեզոք գոտի, Զավախք, Խորհրդային Հայաստան, Խորհրդային Վրաստան, Անդրկովկասյան Դաշնություն:

1918 թ. դեկտեմբերին տեղի ունեցած վրաց-հայկական կարճատև պատերազմից հետո 1919 թ. հունվարի 9-17-ին Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ իրավիրվեց հայ-վրացական խորհրդաժողով: Այստեղ ժամանակակիրապես «կարգավորվեցին» նախկին Ռուսական կայսրության Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառների պատկանելության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության միջև գոյություն ունեցող տարածքային վեճերը: Որոշվեց Ախալքալաքում մտցնել Վրացական վարչակարգ, իսկ պատերազմում հայկական գինուժի կողմից ազատագրված Լոռին վերածել չեզոք գոտու՝ Դաշնակիցների հսկողության ներքո: Լոռու ազատագրված շուրջ 40 գյուղեր մտան չեզոք գոտու մեջ, որը բաժանվեց 3 տեղամասի՝ Ալավերդու, Ուզունլարի (ներկայիս Օձունը), Վորոնցովկայի (ներկայիս Տաշիրը): Խորհրդաժողովում հաստատված Բորչալուի գավառի չեզոք գոտու հյուսիսային սահմանը լինելու էր 1918 թ. դեկտեմբերի 31-ի ժամը 24.00-ի դրությամբ հայ-վրացական գինադադարի պահին վրացական զորքերի զբաղեցրած գիծը: Հարավային սահման հաստատվեց, այսպես կոչված, նախկին «թուրքական սահմանը», այսինքն այն սահմանագիծը, որը մինչև Առաջին համաշխարհային պատերազմում պարտվելը Բորչալուի գավառում զբաղեցնում էին թուրքական զորքերը²: Պատմաբան-քարտեզագետ Գեղամ Բաղայյանի հաշվումների համաձայն Լոռու չեզոք գոտին կազմում էր 1900 քառ. կմ³:

Արդեն 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, երբ առկա էր քեմալական բանակի՝ Լոռի ներխուժելու վտանգ, Վրաստանի կառավարության առաջարկով նոյեմբերի 13-ին Թիֆլիսում ստորագրվում է հայ-վրացական համաձայնագիր՝ Լոռու չեզոք գոտի ժամանակավորապես վրացական զորքեր մտցնելու մասին: Համա-

¹ Հոդվածը պատրաստվել է <<ԿԳՆ Գիտության պետական կոմիտեի՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորմանը իրականացվող «13-6A402» ծածկագրով թեմայի ուսումնավորության շրջանակներում:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթերթի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 82-83, նաև Մելքոնյան Ա. Ա., Զավախքը 19-րդ դարում և 20-րդ դարի արագին քաղաքացին, Երևան, 2003, էջ 304-310, Սուքիասյան Հ., Հայ-վրացական խաղաղարար կոնֆերանսի հայկական պատվիրակության հաշվետվությունը (1918 թ. դեկտեմբեր – 1919 թ. մարտ), «Պատմաբանասիրական հանդես», 2009, N 1, էջ 185-206:

³ Տե՛ս Խաչատրյան Կ., Բադյայան Գ., ՀԱՆՀ տարածքի և սահմանների ծևավորումը (1920 թ. դեկտեմբեր – 1922 թ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու»), թիվ 14, Երևան, 2013, էջ 183:

ձայնագրի երկրորդ կետում արձանագրվում էր, որ գոտում վրացական զորքերի գտնվելը Վրաստանի համար «չի առաջացնելու այդ տարածքի նկատմամբ որևէ նոր իրավունք»: Համաձայնագիրը կնքվում էր 3 ամիս ժամկետով: Այն լրանալուց հետո՝ կողմերի համաձայնությամբ, կարող էր երկարաձգվել, հակառակ դեպքում կորցնելու էր իր ուժը. զորքերը դուրս էին բերվելու, գոտում վերականգնվելու էր նախկին դրությունը: Համաձայնագրի պայմանների կատարմանը հետևելու համար վրացական հրամանատարությանը կից նշանակվելու էր << հատուկ լիազոր¹:

1920 թ. նոյեմբերի 19-ին չեզոք գոտում վրացական գերագույն հրամանատարությունում << հատուկ լիազոր նշանակվեց հայտնի հասարակական-քաղաքական գործիչ, մասնագիտությամբ իրավաբան Գևորգ Խատիսյանը: Նրա կենտրոնատեղին Սանահինն էր: Գ. Խատիսյանը հանդիսանում էր տարածքային-սահմանագծային խնդիրների հարցում գիտակ անձնավորություն, ինչը դրսերվել էր դեռևս 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերի Հայոց ազգային համախորհրդակցության, Հայաստանի և Վրաստանի սահմանազատման վերաբերյալ 1918 թ. հունիսի սկզբի հայ-վրացական բանակցությունների ընթացքում: 1918 թ. հունիսի կեսերին Կ. Պոլիս մեկնած Ավետիս Ահարոնյանի գլխավորած պատվիրակության կազմում Գ. Խատիսյանը հանդիսանում էր սահմանային հարցերով խորհրդական: Ժամանելով Սանահին՝ Գ. Խատիսյանն ականատես եղավ ստորագրված համաձայնագրի տարբեր դրույթների՝ վրացիների կողմից խախտմանը, Լոռու հայ ազգաբնակչության և այստեղ ապաստանած հայ գաղթականների հանդեպ խորական վերաբերմունքի, աչքի ընկնող հայ գործիչների հալածանքների: Նա փաստեր հավաքեց մինչև նոյեմբերի 13-ը վրացական կառավարության՝ չեզոք գոտի զորքեր մտցնելու մտադրության, տարածքը վերջնականապես Վրաստանին միացնելուն ուղղված վրացական իշխանությունների քայլերի վերաբերյալ: Դեկտեմբերի 2-ին Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո նա անհաջող փորձ կատարեց կապ հաստատել Երևանի հետ, ինչից հետո տեղափոխվեց Թիֆլիս²:

1920 թ. աշնան վերջին Հայաստանում տիրող ծանր իրավիճակը, թուրք-հայկական պատերազմում նրա պարտությունը վրացական կողմին հնարավորություն ընձեռեց պարբերաբար խախտելու ստորագրված համաձայնագրի դրույթները: Ավելացվեց չեզոք գոտում տեղակայվող վրացական զորամասերի թվաքանակը, դրանք մտցվեցին նաև գոտու սահմաններից դուրս գտնվող հայկական ութ այլ բնակավայրեր՝ Զալալօղլի

¹Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 340-341:

²Տե՛ս Սուրբիասյան Հ., Լոռու Չեզոք գոտու պատկանելության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը և ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովածու (1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. կետրովար), «« ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն: Գիտական հոդվածների ժողովածու», Երևան, 2014, էջ 250:

(Ստեփանավան), Շահալի կայարան (Վահագնի), Փամբակ, Լորուտ, Քոլագիրան և այլն¹:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում, մի կողմից՝ իշխանությունից հրաժարվող Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչներ Դրաստամատ Կանայանի և Համբարձում Տերտերյանի, մյուս կողմից՝ ՀՀ-ում Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԻՀ) լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանի միջև ստորագրված համաձայնագրով Հայաստանը հոչակվեց «անկախ Սոցիալիստական Հանրապետություն»: Համաձայնագրի երրորդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) «անվիճելի» տարածքների թվում նշվում էր նաև Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. թուրք-հայկական պատերազմը²:

Նշված ձևակերպման տակ պետք է հասկանալ նախկին Բորչալուի գավառի այն հատվածը, որը տարածվում էր Զորագետից անմիջապես հարավ՝ մինչև նախկին Երևանի նահանգի հյուսիսային սահմանը և մտնում էր Վերոհիշյալ վարչամիավորի Լոռու ոստիկանական տեղամասի մեջ: Այս հատվածում էին գտնվում 11 գյուղական հասարակություններ՝ իրենց 26 բնակավայրերով: Դրանցից 9-ը ՀՍԽՀ-ին էին անցնելու ամբողջությամբ, իսկ 2-ը՝ ռուսական Զալալօղլու և Շահնազարի գյուղական հասարակությունները, հատվածաբար (Նովո-Ալեքսանդրովկա, այժմ՝ Բովածոր, Խորհրդային տարիներին՝ Մաքսին Գորկի, Ստեփանավանի տարածաշրջանում) և Շահնազար (այժմ՝ Մեծավան, Տաշիրի տարածաշրջանում) գյուղերը: Ըստ էության Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկվելու էին ներկայիս Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու և Ստեփանավանի տարածաշրջանների հարավային, Վանաձորի տարածաշրջանի հյուսիսային և Տաշիրի տարածաշրջանի հարավարևմտյան հատվածները՝ շուրջ 1060 քառ. կմ տարածությամբ:

Վերը հիշատակված տարածքից ամենամեծ մասնաբաժինը հասնում էր Ստեփանավանի (407,5 քառ. կմ) և Ալավերդու (335,5 քառ. կմ) տարածաշրջաններին: Վանաձորի և Տաշիրի տարածաշրջաններից Խորհրդային Հայաստանին անցնող մասերը կազմում էին համապատասխանաբար՝ 144,3 և 90 քառ. կմ: Ստեփանավանի տարածաշրջանից ներառվում էին՝ ներկայիս Ստեփանավան քաղաքը (1920 թ. Զալալօղլի), ինչպես նաև Ամրակից (նախկինում՝ Նիկոլաևկա, Խորհրդային շրջանում՝ Կիրով), Արմանիս, Գարգառ (նախկինում՝ Հայ Գյառայառ), Գյուլագարակ, Կաթնաղբյուր (նախկինում՝ Ղոթուրբուլաղ), Կուրթան, Հոբարձի, Պուշկինո (նախկինում՝ Ռուս

¹ Տե՛ս Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, էջ 80-81:

² Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 383-384:

Գյառագառ), Վարդաբլուր, Ուրասար (1920 թ.՝ Նովո-Պոկրովկա, խորհրդային շրջանում՝ Կույբիշև) համայնքները՝ իրենց հողատարածքներով, Ալավերդու տարածաշրջանից՝ ներկայիս Ղսեղ, Մարց, Լորուտ, Շամուտ, Ահնիձոր, Աթան, Չկալով (նախկինում՝ Սադիբագրի) համայնքները՝ իրենց հողատարածքներով, Վանաձորի տարածաշրջանից՝ ներկայիս Զորագյուղ, Զորագետ (նախկինում՝ Քոլագերան քաղաքատիպ ավան), Անտառամուտ (նախկինում՝ Քոլագերան), Վահագնի (1920 թ.՝ Շահալի), Եղեգնուտ (1920 թ.՝ Ղամշկուտ), Ղերետ (1920 թ.՝ Խաչիզյուղ), Վահագնաձոր համայնքները: Տաշիրի տարածաշրջանից միայն այժմյան Կարնառատի համայնքի տարածքն էր ամբողջությամբ ընդգրկվելու ՀՍԽՀ կազմում: Բացի այդ՝ Խորհրդային Հայաստանի մաս էր կազմելու նաև ներկայիս Մեղվահովիտ (նախկինում՝ Թազաքենդ կամ Ղարախսա) համայնքի մեծագույն մասը՝ Նորամուտ (նախկինում՝ Ղարաղալա) գյուղով, ինչպես նաև Բլագողարնոյե համայնքի հողատարածքները՝ առանց բնակավայրի¹:

Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածում որևէ ակնարկ չկար նախկին Լոռու ոստիկանական տեղամասի մեծագույն մասն ընդգրկող չեզոք գոտու մասին: Այդուհանդերձ, Հայաստանի խորհրդայնացումից հետո ռազմաքաղաքական նպաստավոր իրավիճակ ստեղծվեց Լոռու պատկանելության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը ՀՍԽՀ-ի օգտին լուծելու համար:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, երբ թուրքական զորքերի Լոռի ներխուժելու վտանգը վերացել էր, Վրաստանի կառավարությունը ոչ միայն պատրաստակամություն չհայտնեց զորքերը դուրս բերել Չեզոք գոտուց, այլև ձգտում էր այն միացնել Վրաստանին: «Հայաստանի Հեղկոմի տեղեկություններով, – նշում է Բաքվի «Կոմունիստ» թերթը, – Վրաստանի կառավարության անդամ Զինեհան, Վրաստանի Սահմանադիր ժողովի հինգ անդամների հետ միասին, չեզոք գոտում ֆիզիկական ուժի գործադրման միջոցով կազմակերպվող հանդիպումներում բնակչությանը պարտադրում են բանաձևեր ընդունել Վրաստանի հետ միավորվելու օգտին»²: Նման «քարոզչություն» անցկացվում է նաև այլ միջոցներով, սակայն ապարդյուն. Վրացական կողմի այս գործելառնը որևէ արդյունք չտվեց: Ընդհակառակը՝ Լոռու բնակչությանը ստիպում է ավելի համախմբվել և ուղիներ որոնել վրացական տիրապետությունից ազատվելու համար:

Սահմանավեճի հարցում միանման չէին կողմերի մոտեցումները: Եթե հայկական կողմի կարծիքով վրացական զորքերը պետք է անմիջապես դուրս բերվեին չեզոք գոտուց, ապա վրացիները, իրենց զորքերի մնալը պատճառաբանելով քեմալական վտանգի առկայությամբ, առաջարկում էին պահպանել գոյություն ունեցող իրավիճակը՝

¹ Տե՛ս Խաչատրյան Կ., Բաղայան գ., նշվ. աշխ., էջ 182-183:

² Коммунист, Баку, 11 յանվար 1921. Տե՛ս նաև ՀՍԱ, ֆ. 1022, գ. 4, գ. 82, թ. 5:

բանակցությունների ժամանակ, փաստորեն, քննության առնելով նաև վրացական գործերի դուրսբերման խնդիրը: Վրացական տարբերակը չէր կարող ընդունելի լինել Խորհրդային Հայաստանի համար: Այս իրողությունն արտացոլված է 1920 թ. դեկտեմբերին վրացական կողմին ուղղված ՀՍԽՀ հայտագրերում, ուր պահանջ էր դրվում վրացական գործերը հեռացնել Չեզոք գոտուց: Վրացական կողմը, սակայն, հրաժարվում էր կատարել ՀՍԽՀ-ի պահանջները: Հայաստանի և Վրաստանի միջև փոխանակված հայտագրերում խոսվում էր նաև Թիֆլիսի համաձայնագրի դրույթները վրացիների կողմից խախտելու, երկվողմ բանակցություններ անցկացնելու հնարավորության, այդ բանակցություններին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության մասին և այլն¹:

Ամենայն հավանականությամբ 1920 թ. նոյեմբերի 13-ին Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության և Վրացական Հանրապետության միջև ստորագրված համաձայնագիրը ՀՍԽՀ իշխանությունների կողմից չճանաչելը պայմանավորված էր ոչ միայն վրացիների կողմից համաձայնագրի դրույթների խախտմամբ (ինչն ակնհայտ էր), այլև նախկին (դաշնակցական) կառավարության ստորագրած երկվողմ ու բազմակողմ պայմանագրերից ու համաձայնագրերից հրաժարվելու սկզբունքային դիրքորոշմամբ ու գործելաձևով²:

Վրաստանի հետ կայանալիք բանակցություններին պատրաստվելու տեսակետից զգալի աշխատանք էր կատարում Թիֆլիսում ՀՍԽՀ նորանշանակ լիազոր ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը (նշանակվել էր 1920 թ. դեկտեմբերի 26-ին): Այս առթիվ հետաքրքիր տեղեկություններ ենք քաղում 1921 թ. հունվարի 17-ին ՀՍԽՀ արտգործողկոմ Ալեքսանդր Բեկառյանին ուղղված Դ. Շահվերդյանի նամակից: Տեղեկացնելով, որ չեզոք գոտուց դուրս գտնվող հայկական բնակավայրերը (Զալալօղի, Շահալի, Քոլագիրան, Գյուլագարակ, Գարգառ, Ղսեղ և այլն) վրացական գործերի կողմից ռազմակալվելու առթիվ զրոյց է ունեցել Վրաստանի արտաքին գործերի նախարարի փոխանորդ Կոնստանտին Սաբախտարաշվիլու հետ, Դ. Շահվերդյանը կարծիք է հայտնում, թե վրացիներն իրենց գործերը հեշտությամբ դուրս չեն հանի հայկական տարածքներից: Նա նշում էր, որ առաջիկա հայ-վրացական բանակցությունների ժամանակ նրանք կփորձեն չարաշահել Խորհրդային Ռուսաստանի հետ 1920 թ. մայիսի 7-ին կնքած համաձայնագիրը՝ պնդելով, որ չեզոք գոտին՝ իբրև Թիֆլիսի նահանգի մեջ մտած տարածք, Վրաստանի մաս ձանաչվի: ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչն այս հանգանանքով էր բացատրում առաջիկա կոնֆերանսին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը

¹ Տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 114, գ. 2, գ. 11, թ. 9, գ. 17, թ. 18, գ. 26, թ. 6 և շրջ., գ. 56, թ. 5, ֆ. 1022, գ. 3, գ. 290, թ. 2-4, գ. 327, թ. 1, «Կոմունիստ» (Երևան), 1920 թ., 9 դեկտեմբերի N 4, 21 դեկտեմբերի, N 13, 24 դեկտեմբերի, N 16:

² Տե՛ս Սուքիասյան Հ., Լոռու Չեզոք գոտու պատկանելության վերաբերյալ հայ-վրացական տարածքային վեճը ..., էջ 251-252:

Վրացիների դրական վերաբերմունքը և Կ. Սաբախտարաշվիլու՝ կոնֆերանսը հնարավորինս շուտ գումարելու ցանկությունը: Դ. Շահվերդյանը տեղեկացնում էր նաև, որ առաջիկա հայ-վրացական կոնֆերանսին պատրաստվելու նպատակով ինքը լիազոր ներկայացուցչությանը կից հանձնաժողով է ստեղծել՝ Լոռու չեզոք գոտու վերաբերյալ տեղեկատվություններ պատրաստելու համար: Հանձնաժողովի մեջ ընդգրկված Գևորգ Խատիսյանը պետք է տեղեկություններ հավաքեր Լոռու տարածքի և բնակչության, Սաքո Սահակյանը, Կարապետյանը և Գաբրիել Գրիգորյանը՝ տնտեսության, Արամայիս Երզնկյանը՝ հարցի նախապատմության, իսկ Սիմոնիկ Փիրումյանը՝ հասարակական-քաղաքական կյանքի վերաբերյալ: Նախատեսվում էր հանձնաժողովի աշխատանքներն ավարտել հունվարի վերջին: Լիազոր ներկայացուցիչը նշում էր, որ կարևոր խնդիր է կոնֆերանսում քննարկելիք հարցերի շրջանակը որոշելը: Ըստ այդմ էլ տեղեկացնում էր, որ Գ. Խատիսյանն առաջարկել է Չեզոք գոտու հարցը քննարկել ոչ թե առանձին, այլ երկու երկրների միջև եղած բոլոր վիճելի հարցերի հետ միաժամանակ¹: Դ. Շահվերդյանը կարևորություն էր տալիս այս տեսակետին, ինչի արդյունքում Երևան ուղարկվող մի շարք փաստաթղթերի թվում (Լոռու խնդիր վերաբերյալ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության, ՀՄԽՀ լիազոր ներկայացուցչության գրագրություններ) ուղարկեց նաև Գ. Խատիսյանի նշված գեկուցագրի պատճենը: Փաստորեն նկատի ունենալով Գ. Խատիսյանի գիտելիքներն ու փորձը՝ խորհրդային իշխանություններն անուշադրության չմատնեցին նրան: Դ. Շահվերդյանի հունվարի 17-ի գրությունում իշխատակված գեկուցագրում (այն թվագրված է 1921 թ. հունվարի 10-ով) Գ. Խատիսյանն առաջարկներ էր անում հայ-վրացական տարածքային խնդիրները կարգավորելու առնչությամբ: Քննության առնելով ծով դուրս գալու ձանապարհին Հայաստանի համար Ճորոխի ավագանի նշանակության հարցը՝ Գ. Խատիսյանը շեշտում էր Արդվինի շրջանի և Զանսույան հանքավայրի ու գործարանի կարևորության մասին: Ահա այս պատճառով համոզմունք էր հայտնում, թե «Հայաստանի գոյությունն անհնար է առանց Կարսի վերադարձման և Կարսից դեպի Սև ծով ձանապարհի անցկացման: Եվ առանց Կարսի վերադարձման հավատի անկարելի է կառուցել Հայաստանը»: Չեկուցագրում մատնանշվում էր, որ հայկական կողմի համար առավել ձեռնտու կարող է լինել Հայաստանի և Վրաստանի միջև վիճելի համարվող բոլոր տարածքների (Լոռի, Ախալքալաքի գավառ, Կարսի մարզ, Արդվինի շրջան) հարցի միաժամանակ բարձրացումը, քան սկզբում միայն Չեզոք գոտու սահմանագատման խնդիրն առաջ քաշելը²:

¹Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 12, թ. 21-22:

²См. Сукиасян А., Документы об армяно-грузинском пограничном споре в Лори (декабрь 1920 г. – январь 1921 г.), “Историко-филологический журнал”, 2010, N 1, с. 260-262.

Մոսկվայում կայանալիք խորհրդաթուրքական կոնֆերանսին մեկնելու ձանապարհին ՀՍԽՀ արտգործուղիում Ա. Բեկզայանը կանգ առավ Թիֆլիսում՝ Վրաստանի կառավարության հետ նախատեսվող բանակցությունների հարցը պարզելու նպատակով: 1921 թ. հունվարի 19-21-ին Վրաստանի արտգործնախարարի փոխանորդ Կ. Սաբախտարաշվիլու հետ Ա. Բեկզայանի վարած բանակցությունները դրական ելք չունեցան, ինչից հետո վերջինը մեկնեց Բաքու: Բաքվից Հայիեղկոմի նախագահ Սարգիս Կայանի և ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմի փոխանորդ Ասքանազ Մրավյանի հետ ունեցած հեռախոսագրույցի ժամանակ նա տեղեկացնում էր, որ բանակցությունները փակուղի են մտել, քանի որ Վրացական իշխանությունները մերժել են իր առաջարկը՝ բանակցություններին վճռական ձայնի իրավունքով մասնակից դարձնել նաև Խորհրդային Ռուսաստանին¹:

Վրացական գորքերը չեզոք գոտուց դուրս բերելու և հայ-վրացական բանակցություններին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցության ձևաչափի հարցում անհամաձայնության պատճառով Լոռու խնդիրը խաղաղ ձանապարհով կարգավորելուն ուղղված ջանքերն ապարդյուն անցան. տարածքը դարձավ Խորհրդավրացական ռազմական առձակատնան թատերաբեմ:

Լոռու չեզոք գոտու խնդիրն շուտով միջամտեց Խորհրդային Ռուսաստանը, որի հեռահար նպատակն էր Ադրբեյջանից և Հայաստանից հետո խորհրդայնացնել նաև Վրացական Դեմոկրատական Հանրապետությունը: Խնդիրն իրականացնելու ձանապարհին ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն և 11-րդ Կարմիր բանակի ռազմ-հեղինորհուրդը, համագործակցելով ՀՍԽՀ իշխանությունների հետ՝ նախապատրաստում և 1921 թ. փետրվարի կեսերին Չեզոք գոտում ապստամբություն են բարձրացնում: Փետրվարի 12-ին Հայկական Կարմիր բանակի հատուկ նշանակության ջոկատը, Լոռու պարտիզանական գունդը և չեզոք գոտու ապստամբ գյուղացիները տարբեր ուղղություններով հարձակման են անցնում: Նույն օրը ապստամբների շտաբը օգնության խնդրանքով դիմում է Խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր բանակի ռազմիկ-Խորհրդին: Եթորյա համառ մարտերի արդյունքում ՌՍԴԽՀ գորքերին և ապստամբներին հաջողվում է ամբողջ Չեզոք գոտին մաքրել յոթհազարանոց վրացական բանակից: Իսկ արդեն փետրվարի 25-ին Կարմիր բանակը մտավ Թիֆլիս, ինչի արդյունքում Խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Վրաստանում²:

Ապստամբության հաղթանակից հետո Լոռիում հաստատվում է Խորհրդային իշխանություն, որը ենթարկվելու էր Խորհրդային Հայաստանի կառավարությանը: «Այսպիսով՝ այն, ինչ չէր հաջողվել անել Հայաստանի Հանրապետությանը 1918–1920 թթ. ընթացքում, – նկատում է

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 35, թ. 28:

² Մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ. Հ., նշվ. աշխ., էջ 83-96:

պատմաբան Կ. Հարությունյանը, – 1921 թ. փետրվարին իրականացրեց Խորհրդային Հայաստանը՝ Խորհրդային Ռուսաստանի գորքերի օգնությամբ»¹:

Վրացական գինագրավումից Լռու ազատագրումը և Խորհրդային Հայաստանին միացնելը կանխեց նաև Չեզոք գոտուն հարակից հայկական մի քանի բնակավայրերի հնարավոր անջատումը Հայաստանից: Սա նորաստեղծ Խորհրդային հանրապետության տարածքային առաջին լուրջ ձեռքբերումն էր նաև:

Վրաստանի խորհրդայնացումից և Հայաստանում բռնկված հակախորհրդային ապստամբությունը ճնշելուց հետո Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը կենսագործող ՌԿ(Բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոն ձեռնամուխ եղավ Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև առկա տարածքային խնդիրների կարգավորմանն ու միջամտական սահմանների հստակեցմանը: Կավերյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի այլենումում քննարկվեց հանրապետությունների սահմանների հարցը և որոշվեց ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ կազմված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի ներկայացուցիչներից՝ Կավերյուրոյի անդամ Սերգեյ Կիրովի ղեկավարությամբ: Հանձնաժողովը պետք է մինչև հունիսի 1-ը պարզեր խնդիրը և ներկայացներ Կավերյուրոյին²:

Հայաստանի հեղկոմի 1921 թ. մայիսի 9-ի նիստում քննարկվեց Հայաստանի սահմանների որոշման հարցը: Վրաստանի և Ադրբեյջանի հետ սահմանների հաստատման վերաբերյալ արտգործողկոմի փոխանորդ Ա. Մռավյանի գեկուցումը լսելուց հետո Հայի հեղկոմը որոշեց Ա. Մռավյանի նախագահությամբ (անդամներ՝ Ս. Համբարձումյան, Ա. Ղարազյան, Հ. Լազյան) ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ Վրաստանի և Ադրբեյջանի հետ Հայաստանի սահմանները որոշելու նպատակով նյութեր պատրաստելու համար, ինչպես նաև սահմանների խնդիրը բարձրացնել հարեւան հանրապետությունների կառավարությունների առջև³:

Վրաստանի և Ադրբեյջանի հետ սահմանային հարցերի քննարկմանը պատրաստվելու գործում զգալի աշխատանք էր կատարում ՀՍԽՀ Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը: Մայիսի 19-ին մի շարք ժողովում նշանակված գործությամբ արտգործողկոմատի քարտուղար Ս. Խոջամիրյանն առաջարկում էր հաջորդ օրը ժամը 1-ին «ներկա լինել Հայաստանի սահմանների որոշման խորհրդակցությանը»⁴: Ժողովում տեղեկատվություններ էր պատրաստում, քարտեզներ հավաքում վիճելի տարածքների վերաբերյալ⁵: Այդ նյութերից առանձնապես հետաքրքիր է Ախալքալաքի հիմնախնդրի վերաբերյալ

¹ Հարությունյան Կ. Ա., Հայկական ազգային գորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002, էջ 98:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1021, գ. 2, գ. 1185, թ. 7:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 15, թ. 17:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, գ. 1, գ. 66, թ. 2:

⁵ Տե՛ս նոյն տեղում, գ. 2, գ. 21, թ. 73:

հայտնի հասարակական գործիչ, իրավաբան Պողոս Աբելյանի հեղինակած ընդարձակ գեկուցագիրը: Այն պատրաստվել է 1921 թ. հուլիսի 17-ին արտգործողություն Ա. Մօավյանի առաջարկով: Այստեղ պատմական, տնտեսական, քաղաքական և ժողովրդագրական տեսակետներից հիմնավորվում էր Ախալքալաքի գավառը Խորհրդային Հայաստանին միացնելու անհրաժեշտությունը: Կարծիք հայտնելով, թե Ախալքալաքի բնակչությունը «չի հաշտվի Վրաստանի սահմաններում մնալու հետ», գեկուցագրի վերջում Պ. Աբելյանն առաջարկում էր Ախալքալաքը և Ծալկայի շրջանն անպայման միացնել Խորհրդային Հայաստանին¹:

ՈԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի պլենումի որոշմամբ ստեղծված Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովը Թիֆլիսում իր աշխատանքներն իրականացրեց հունիսի 25-27-ին: Հանձնաժողովում վրացիներից ներկայացված էին Սվանիձեն և Թոորիան, ադրբեջանցիներից՝ Հուսեյնովը, Հաջինսկին և Ռասուլզադեն, հայերից՝ ՀՍԽՀ միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը: Հանձնաժողովի նիստում վերջինս առաջարկեց ի թիվս Լոռու և Լեռնային Ղարաբաղի ՀՍԽՀ-ին միացնել Ախալքալաքի գավառը: Առաջարկը, սակայն, կտրականապես մերժվեց հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչների, ինչպես նաև նախագահ Ս. Կիրովի կողմից: Նման իրավիճակում Բեկզադյանը իրաժարվեց հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելուց և պահանջեց վիճելի բոլոր հարցերը փոխանցել կովկասյան բյուրոյի պլենումի քննարկմանը²: Ինչպես դիպուկ նկատում է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, «նման անհավասար ներկայացուցչական կազմով հայ ժողովրդի ազգային-պետական շահերի պաշտպանության որևէ երաշխիք չէր կարող լինել»³: Հանձնաժողովի երօրյա անարդյունք աշխատանքը վկայում է ինց այդ մասին: Տարածքային խնդիրների կարգավորումը փոխանցվեց ՈԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյին:

1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՈԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումը, այլ խնդիրների թվում, քննության առավ նաև Հայաստանի տարածքներին առնչվող հարցերը: Պլենումի հուլիսի 7-ի նիստում իր հանգուցալուծումը ստացավ Լոռու չեզոք գոտու, ինչպես նաև Ախալքալաքի և Խրամի (Ծալկայի) «վիճելի» շրջանների՝ Հայաստանի կամ Վրաստանի կազմում ընդգրկելու խնդիրը: Թեժ քննարկումներից հետո քվեարկության արդյունքում, ծայների վեց կողմ, մեկ ծեռնպահ հարաբերակցությամբ, որոշվեց Լոռու չեզոք գոտին միացնել Հայաստանին, իսկ Ախալքալաքի և Խրամի շրջանների հարցը փոխանցել Վրաստանի կոմկուսի կենտկոմի

¹ Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., հավելված, էջ 466-491:

² См. Нагорный Карабах в 1918-1923 гг., сборник документов и материалов, Ереван, 1992, с. 640-642.

³ Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 334:

քննարկմանը¹: Վերջինս հուլիսի 16-ին հաստատեց Լոռու չեզոք գոտու նասին Կովկասյան բյուրոյի պահպանության որոշումը, իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքի և Խորամի շրջաններին, ապա առանց հաշվի առնելու նշալ տարածքների բնակչության ցանկությունը, անընդունելի համարեց այդ շրջանները Հայաստանին միացնելը²:

Արդեն օգոստոսի 15-ին Կովկասյան բյուրոն Անդրկովկասի խորհրդային հանրապետություններին առաջարկեց սահմանագծման վերաբերյալ ընդհանուր պայմանագիր ստորագրել³: Սակայն հետագայում այդպիսի միասնական պայմանագիր չստորագրվեց: Մասնավորապես Հայաստանի և Վրաստանի միջապետական սահմանի վերջնական որոշումն ամրագրվեց Երկկողմ պայմանագրով:

Սահմանագծման աշխատանքներում կարևոր դեր էր վերապահված ՀՍԽՀ արտգործժողովներին: Հոկտեմբերի 17-ին ժողովներին ուղղված գրությամբ ՀՍԽՀ ժողովներին քարտուղար Մ. Ղարաբեկյանը խնդրում էր շտապ ուղարկել հայ-Վրացական սահմանագծի վերաբերյալ ժողովներում եղած բոլոր նյութերը⁴: Բանն այն է, որ ժողովներից պատրաստվում էր Վրաստանի հետ խորհրդային Հայաստանի սահմանների որոշման մասին համաձայնագրի ստորագրմանը:

Նոյեմբերի 6-ին ՀՍԽՀ ժողովներին նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը և Վրաստանի հեղկոմի նախագահ Բուրդու Մդիվանին Թիֆլիսում համաձայնագիր ստորագրեցին Երևու հանրապետությունների սահմանների որոշման վերաբերյալ: Կնքված համաձայնագրով սահմանն սկսվում էր Ուչբափալար լեռնագագաթից՝ Թուրքիայի, Հայաստանի և Վրաստանի սահմանագլխից, ծգվում դեպի արևելք՝ մինչև Օրբու Դադ լեռը, ապա թեքվում հյուսիս-արևելք և արևելք՝ Մադարափա լիճն ու Տրոյիցկոյե գյուղը թողնելով Վրաստանին, Տատոյ Խարաբա (այժմ՝ Շիրակի մարզի Բավրա գյուղը), Կարմիր Խարաբա և Դարաքյո (Սարագյուղ) գյուղերը՝ Հայաստանին՝ մինչև Լեզլի Դադ (այժմ՝ Աչքասար): Այնուհետև սահմանն անցնելու էր Վիրահայոց լեռների ջրաժանով՝ մինչև Պալութի Բաշի լեռը: Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառների սահմանագատման ժամանակ հիմք էր ընդունվել ցարական շրջանի վարչական բաժանումը: Փաստաթղթի վերջում արձանագրվում էր, որ «Իրգանչայ, Սաաթի, Զանդար, Աղքորփի, Օփրեթ, Խոժորնի, Բրդաձոր, Սաղախլո գյուղերը մնում են նշված գծից հյուսիս (Վրաստանի ՍԽՀ սահմաններում)»⁵: Փաստորեն, Թիֆլիսի համաձայնագրով Լոռու չեզոք գոտին մնաց Խորհրդային Հայաստանի կազմում: Հետագայում հայկական կողմը փորձեց հասնել Վրաստանի կազմում Զավախքի և Հյուսիսային Լոռու համար ինքնավարության, սակայն հաջողություն չունեցավ:

¹ Տե՛ս նոյն տեղում, հավելված, էջ 465-466:

² Տե՛ս ՀՍԽ, հայարածու 1, գ. 7, թ. 43-45:

³ Տե՛ս ՀՍԽ, ֆ. 1021, գ. 2, գ. 1185, թ. 38:

⁴ Տե՛ս ՀՍԽ, ֆ. 114, գ. 1, գ. 8, թ. 129:

⁵ Տե՛ս ՀՍԽ, ֆ. 113, գ. 3, գ. 1, թ. 66, հմտ.՝ գ. 55, թ. 3, 10, ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովների կազմում իմֆորմացիոն բաժնի «Բիլետեն», թիվ 8, Երևան, 1922, էջ 7, Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 344-345:

1922 թ. հունվարի 4-ին ՀՍԽՀ-ի և ՎՍԽՀ-ի ներկայացուցիչների միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրով առավել հստակեցվեց Երկու հանրապետությունների միջականագիծը¹:

Թիֆլիսի համաձայնագրի ստորագրումից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունների համար ոյուրին չեղավ նաև Վրաստանի հետ միջականագիծը գործընթացը: Խնդիրն այն է, որ վրացիները նույնիսկ եղածով չեն բավարարվում, այլ փորձում էին նոր տարածքներ պոկել ՀՍԽՀ-ին անցնող Լոռու չեզոք գոտուց՝ ձգձգելով որոշ հայկական տարածքների պաշտոնական փոխանցումը Հայաստանին:

Թիֆլիսում նախապես ձեռք բերված պայմանավորվածության հիման վրա ՀՍԽՀ արտգործողկոմ Ա. Մռավյանը 1921 թ. դեկտեմբերի 24-ին Խորհրդային Վրաստանի իր պաշտոնակից Ա. Սվանիձեին ուղղված հեռագրում տեղեկացնում էր, որ Վորոնցովկայի շրջանի (նաև Վերջինի մեջ մտնող Պրիվոլնիի) ընդունումը տեղի կունենա դեկտեմբերի 27-ին Վորոնցովկայում, ուր սպասում են Վրաստանի ներկայացուցիչներին²: Նույն օրը՝ դեկտեմբերի 24-ին, Լոռու գավառային հեղկոմի նախագահ Օնիկ Օհանջանյանին, իսկ դեկտեմբերի 26-ին՝ գինկոմ Ստեփանյանին արտգործողկոմատը տեղեկացրեց Վորոնցովկայի շրջանը վրացիներից ընդունող ՀՍԽՀ ներկայացուցիչներ նշանակելու մասին: Սակայն Վորոնցովկա ժամանած վրացի ներկայացուցիչներ հնգորոկվան և Կիկոնեն հայտարարեցին, որ իրենք իրավասու չեն տարածքների փոխանցման հարցը կարգավորելու և միայն լիազորված են ընդգրկվելու Երկու հանրապետությունների սահմանագատման հանձնաժողովում³: Վրացական իշխանությունների կողմից ձգձգման իրական պատճառների մասին տեղեկացնում ենք Ա. Մռավյանին ուղղված Վրաստանում ՀՍԽՀ նախկին լիազոր ներկայացուցիչ Հ. Սուրխառյանի 1922 թ. հունվարի 6-ի հեռագրից: Վերջինս տեղեկացնում էր, որ վրացիները պատրաստ են խնդրո առարկա տարածքների փոխանցումը կատարել նույնիսկ հունվարի 7-ին, եթե ՀՍԽՀ-ը համաձայնվի Վրաստանին զիջել սահմանային Լամբալու և Քերիալի գյուղերը⁴: Դրական արդյունք չունեցան նաև Ա. Մռավյանի կողմից Ա. Սվանիձեին ուղղված մի շարք հեռագրերը:

Այս պայմաններում նախաձեռնությունն իրենց ձեռքը վերցրեցին Լոռու տեղական իշխանությունները: 1922 թ. հունվարի 15-ին արտգործողկոմ Ա. Մռավյանին ուղղված հեռագրում Լոռու գավիեղկոմի նախագահ Օ. Օհանջանյանը տեղեկացնում էր, որ հունվարի 12-ին ժամանել է Վորոնցովկա՝ շրջանն ընդունելու նպատակով, սակայն Վրաստանի ներկայացուցիչները չեն եկել: Հունվարի 13-ին Վորոնցովկայի շրջանի

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, գ. 2, գ. 55, թ. 21 և շրջ.:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 55, թ. 11:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 8, 12-13:

⁴ Տե՛ս նույն տեղում, թ. 20, Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 346:

ներկայացուցիչների ժողովը որոշել է հաջորդ օրվանից շրջանը փաստացի կերպով ՀՍԽՀ կազմում համարել՝ հետագայում սահմանագծի տեղագրական մանրամասները ճշտելով Վրաստանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Օ. Օհանջանյանը տեղեկացնում էր, որ որոշ մանրամասներ պարզելուց հետո այդ առթիվ գրավոր գեկուցում կներկայացնի¹: Արդեն հունվարի 18-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղղած հեռագրով Օ. Օհանջանյանը տեղեկացրեց. «Վորոնցովկայի շրջանն ընդունված է»²:

Հունվարի 25-ին Օ. Օհանջանյանը գտնվում էր Երևանում: Ա. Մռավյանի հանձնարարությամբ արտգործողկոմատի քարտուղար Մ. Խոջամիրյանն այդ օրը նրան ուղղված գրությամբ խնդրում է Լոռու գավիեղկոմի լիազոր Ս. Լիսինի հետ հաջորդ օրն այցելել ժողկոմատ՝ «մի քանի տեղեկություններ տալու Վորոնցովկայի շրջանի վերաբերյալ»³: Ինչպես տեսնում ենք, շրջանը ՀՍԽՀ-ին միանալուց հետո ևս արտգործողկոմատին գրադեցնում էին տարածքին առնչվող հարցերը:

1922 թ. մարտին Անդրկովկասյան Դաշնության կազմավորումից հետո Հայաստանի, Վրաստանի և Աղբեջանի միջև գոյություն ունեցող խնդրահարուց հարցերի շարքում առաջնայիններից էին տարածքային-սահմանագծային խնդիրները: Բանն այն է, որ սկզբունքային տարածայնությունների պատճառով որոշ դեպքերում հնարավոր չէր եղել միջակատական սահմանների մասին երկկողմ պայմանագրեր ստորագրել (մասնավորապես Հայաստանի և Աղբեջանի միջև): Անգամ հանրապետությունների միջև ստորագրված պայմանագրերն ու համաձայնագրերը վերջնական չէին, տարակարծությունների տեղիք էին տալիս: Մրանք սահմանային շերտում գտնվող հողատարածքների, անտառների, աղբյուրների պատկանելության և օգտագործման հարցում հանգեցնում էին վեճերի, երբեմն՝ նույնիսկ ընդհարումների:

Այս ամենին ավելանում էին քոչի ու գաղթականների խնդիրները: Նշյալ իրողությունը Անդրդաշնության իշխանություններին հարկադրեց հողային հածնաժողովներից զատ ստեղծել նաև նշյալ հարցերով գրավող հատուկ հանձնաժողովներ: Վերը թվարկված հարցերի կարգավորման գործում առաջնային դեր ուներ Անդրդաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեն: Նույն սկզբունքով հանրապետություններում այդ գործառությը վերապահված էր կենտգործկոմներին և գավառործկոմներին: Անդրդաշնության օրոք ևս նշյալ խնդրով, բացի պետական մարմիններից, գրավում էին նաև կուսակցական մարմինները (ի դեմս ՌԿ(Բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի): Սահմանային վեճերը կարգավորող

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 55, թ. 29:

² Նոյն տեղում, թ. 69:

³ Նոյն տեղում, թ. 71:

հանձնաժողովներ են կազմակերպել նաև Անդրդաշնության Միութենական խորհուրդը, նույնիսկ Կովկասյան կարմիր բանակի հրամանատարությունը¹:

1922 թ. մայիսի 8-ին Միութենական խորհուրդը կազմեց Հայաստանի և Ադրբեյջանի սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողով: Իսկ մայիսի 15-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմն անդրկովկասյան երեք հանրապետությունների տարածքային-սահմանային վեճերը լուծող հանձնաժողովում ՀՍԽՀ ներկայացուցիչ նշանակեց Մ. Ղարաբեկյանին²: Գոյություն ունեցող հողային վեճերը կարգավորելու նպատակով 1922 թ. հոկտեմբերի 30-ին պատկառելի կազմով առանձին հանձնաժողով կազմակերպեց նաև ՈԿ(Բ)Կ Անդրերկորկոմը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին երկրամասի երեք նշանավոր բոլշևիկ գործիչները՝ Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Ա. Մյասնիկյանը³:

Անդրկենտգործկոմի նախագահության 1923 թ. փետրվարի 5-ի որոշմամբ ստեղծվեց գավառների հողային վեճերը որոշող կենտրոնական հանձնաժողով, որի նախագահ նշանակվեց ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ Սաքը Համբարձումյանը, ուն նույն թվականի մայիսի 14-ին փոխարինեց Սարգիս Կասյանը⁴: Իսկ արդեն Անդրկենտգործկոմի նախագահության 1924 թ. հունվարի 30-ի նիստում որոշում կայացվեց նշալ հանձնաժողովը վերանվանել «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողով» և հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը. նախագահ՝ Սարգիս Կասյան, անդամներ՝ Ս. Յաղուբով և Խոմերիկի⁵:

Անդրկենտգործկոմի նախագահության 1927 թ. հունիսի 20-ի նիստում քննարկվեց Անդրդաշնության հանրապետությունների միջև ծագած հողային և անտառային վեճերի վերաբերյալ հանձնաժողովի կազմած կանոնադրության նախագիծը, ինչը նպատակ ուներ գոյություն ունեցող սահմանային վեճերին լուծումներ գտնել: Ըստ այդմ էլ որոշվեց Կենտգործկոմի նախագահության հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի կանոնադրության խմբագրված տարբերակը: «Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի» կանոնադրության առաջին կետի համաձայն՝ Անդրկենտգործկոմի նախագահության 1924 թ. հունվարի 30-ի որոշմամբ գործող «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովը» վերանվանվեց «Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողով»⁶: Հանձնաժողովը գործելու էր Անդրդաշնության կենտգործկոմի Ենթակայության ներքո՝ հաշվետու լինելով նրան: Նրա

¹ Տե՛ս Սահակյան Ա. Լ., Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում, Վանաձոր, 2013, էջ 175:

² Տե՛ս նույն տեղում, էջ 176:

³ Տե՛ս Ղազախեցյան Կ. Ն., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975, էջ 130:

⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 95, թ. 115, 131 շրջ.:

⁵ Տե՛ս Կրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ. 607, գ. 1, գ. 23, թ. 6:

⁶ Զրային վեճերի լուծումը հանձնվել էր Անդրկովկասի ջրային տնտեսությանը:

մեջ մտնելու էին նախագահն ու 2 անդամները՝ նշանակված Անդրկենտգործկոմի կողմից, ինչպես նաև 6 անդամներ, որոնք ներկայացնելու էին դաշնության կազմի մեջ մտնող 3 հանրապետությունները: Այսինքն՝ յուրաքանչյուր հանրապետությունից 2 ներկայացուցիչ, որոնք հաստատվում էին Անդրկենտգործկոմի նախագահության կողմից: Որոշման հատուկ կետով սահմանվում էր, որ Անդրդաշնության տարածքում գործող պետական հիմնարկությունները «պարտավոր են ներկայացնելու հանձնաժողովին բոլոր պահանջվող տեղեկություններն ու նյութերը», նաև անհրաժեշտ տեղեկություններ ու բացատրություններ տալ հանրապետությունների կենտգործկոմներին¹:

Անդրդաշնության Կենտգործկոմի նախագահության 1929 թ. հուլիսի 22-ի նիստում հաստատվեց Կենտգործկոմին առընթեր հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի նոր կազմ. Ս. Կասյան (նախագահ), Եգանով (նախագահի տեղակալ), Ս. Յակուբով, Գ. Ստուրուա (անդամներ): Հանձնաժողովի մեջ ընդգրկվելու էին նաև Անդրդաշնությունը ներկայացնող երեք հանրապետություններից երկուական ներկայացուցիչներ²: Անդրկենտգործկոմի նախագահության սեպտեմբերի 2-ի նիստում հաստատվեցին հանձնաժողովի նոր անդամները. ԱՄԽՀ-ից՝ Միր-Զաֆար Բաղիրովը և Ս. Շամսադինսկին, ՀՄԽՀ-ից՝ Ա. Երզնկյանը և Վ. Մամիկոնյանը, ՎՄԽՀ-ից՝ Ս. Զուղելին և Վ. Վաշակիհանեն³:

Հարկ է փաստել, որ Անդրդաշնության սահմաններում սահմանագծային աշխատանքներ իրականացնող կենտրոնական և տեղական հանձնաժողովների աշխատանքները կատարվում էին ձգձգումներով, հաճախ ուղեկցվում տեղական բնակչության դժգոհություններով:

1921 թ. նոյեմբերի 6-ի հայ-վրացական համաձայնագրով երկու երկրների սահմանագծի որոշումից և 1922 թ. հունվարին Վորոնցովկայի շրջանը ՀՄԽՀ-ի կազմում ընդգրկվելուց հետո ևս վրացական իշխանությունները շարունակում էին հավակնություններ հանդես բերել ՀՄԽՀ սահմանամերձ բնակավայրերի, հողատարածքների նկատմամբ: Բանն այն է, որ նոյեմբերի 6-ի համաձայնագրով որոշվել էր Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի միջային կատարական սահմանի ընդհանուր ուղղությունը (այն էլ հիմք ընդունելով նախկին Վարչաքաղաքական բաժանումները), ուստի հնարավոր չէր այն նույնությամբ, առանց փոփոխությունների կենսագործել: Տեղում մանրակրկիտ սահմանագծում կատարելն անհրաժեշտություն էր:

¹ Տե՛ս ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, գ. 1763, թ. 20-21:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, գ. 1412, թ. 34: Հայաստանի Կենտգործկոմի Նախագահության 1929 թ. օգոստոսի 7-ի որոշմամբ հանձնաժողովում ՀՄԽՀ ներկայացուցիչներ նշանակվեցին Ա. Երզնկյանը և Վ. Մամիկոնյանը (ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 267, թ. 77, 86):

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, գ. 199, թ. 12, գ. 1412, թ. 89:

Վրացական տեղական իշխանությունների սանձարձակությունն այնտեղ էր հասել, որ ՎՍԽՀ Բորչալուի գավառային գործադիր կոմիտեն հարկեր էր սահմանել ՀՍԽՀ կազմում մնացած Լամբալու և Քերփալի գյուղերի վրա: 1922 թ. սեպտեմբերի 6-ին այդ մասին տեղեկացնելով Վրաստանի իր պաշտոնակցին, նաև հայտնելով, որ նշյալ գյուղերի բնակիչները ցանկություն են հայտնել մնալ ՀՍԽՀ կազմում, Խորհրդային Հայաստանի ներքին գործերի ժողկոմ Ավիս Նուրիջանյանը պահանջում էր Բորչալուի գավառործկոմին հանձնարարել դադարեցնելու Լամբալուից և Քերփալիից հարկեր պահանջելը և դրանք փոխանցել ՀՍԽՀ Լոռու գավառործկոմին¹:

Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Վրաստանի միջաբետական սահմանի հստակեցման և սահմանագծայի խնդիրների կարգավորման հարցը քննարկվեց Անդրդաշնության Կենտգործկոմին առընթեր վարչական սահմանագատման հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ի նիստում: Նիստին մասնակցում էին նաև ՀՍԽՀ և ՎՍԽՀ ներքին գործերի և հողագործության ժողկոմատների բարձրաստիճան պաշտոնյաները: Կայացված որոշմամբ հաստատվեց ՀՍԽՀ Ալեքսանդրապոլի ու Լոռու գավառների՝ համապատասխանաբար ՎՍԽՀ Ախալքալաքի ու Բորչալուի գավառների հետ սահմանագիծը²: Եթե Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառների վերջնական սահմանագծման հարցում ՀՍԽՀ և ՎՍԽՀ ներկայացուցիչները համաձայնության եկան³, ապա գոյություն ունեցող տարակարծությունների պատճառով չհաջողվեց Լոռու և Բորչալուի գավառների վերջնական սահմանագծում անցկացնել: Ավելին, նույնիսկ որոշ հատվածներում ՀՍԽՀ-ը տարածքային կորուստներ ունեցավ: Ուստի միանշանակ իրավացի է ակադեմիկոս Ա. Մելքոնյանը, երբ գրում է. «Եթե առաջին դեպքում (իմա՝ Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառների միջև սահմանը) սահմանային որևէ փոփոխություն չէր նախատեսվում, ապա երկրորդ դեպքում (իմա՝ Լոռու և Բորչալուի գավառների միջև սահմանը) մասնակի ճշտումներ լինելու էին»⁴: Այս հանգամանքը հաջորդ տարիներին ՀՍԽՀ-ի և ՎՍԽՀ-ի սահմանում նոր հակասություններ առաջ բերեց:

Վիճելի մնացած հողատարածքներից էր Չաթախի անտառաշերտը: Խնդիրը հետևյալում էր. 1921 թ. նոյեմբերի 6-ի համաձայնագրի հիման վրա ՀՍԽՀ և ՎՍԽՀ հողագործության ժողկոմները 1922 թ. սեպտեմբերի 7-ին Չաթախի անտառը (այն տարածվում էր Լոք-Լալվարի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին) ՀՍԽՀ-ին պատկանելու հարցում համաձայնության էին եկել: Արդեն հոկտեմբերի 12-ին ստորագրված ակտով այն հանձնվեց Ախալքալաքի անտառտեսությանը: Անդրդաշնության կենտգործկոմի հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 30-ի որոշմամբ

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 116, գ. 3, գ. 52, թ. 193:

² Տե՛ս ՎԱԱ, ֆ. 607, գ. 1, գ. 99, թ. 4, ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 95, թ. 100 և շոշ.:

³ ՀՍԽՀ Ալեքսանդրապոլի և ՎՍԽՀ Ախալքալաքի գավառների սահմանագծման պլան-գծագիրը տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, գ. 227, թ. 4:

⁴ Մելքոնյան Ա. Ա., նշվ. աշխ., էջ 347:

Երկու հանրապետությունների սահմանագիծն անցնելու էր Լոք-Լալվարի լեռնաշղթայով։ Փաստորեն, 20.000 դեսյատին¹ անտառից 6000 դեսյատինն ընկնում էր 1921 և 1923 թթ. սահմանագծերի միջանկյալ մասում։ Օգտվելով այս հանգամանքից՝ Վրացական կողմն առաջարկեց անտարի այդ մասը համատեղ օգտագործել։ Բնականաբար, դա չէր կարող ընդունելի լինել անտառասակավ Խորհրդային Հայաստանի համար։ Լոռու և Ախալալայի անտառտնտեսությունները շարունակեցին նախկինի նման օգտագործել անտառը, ինչն առաջացնում էր ՎՍԽՀ հողժողկոմատի դժգոհությունը²։

1920-ականներին հայ-վրացական սահմանային գոտում ՀՍԽՀ ունեցած տարածքային կորուստները պայմանավորված էին վրացական կողմի անզիջում կեցվածքով, հայկական կողմի հաճախ պասիվ դիրքորոշմանք, նաև այն իրողությամբ, որ Անդրկովկասյան իշխանությունները հետևողական չէին իրենց որոշումներում։ Այսպես, ՀՍԽՀ հողժողկոմ Ա. Երզնկյանը Անդրերկրկոմի նախագահության 1925 թ. օգոստոսի 13-ի նիստում գեկուցեց Լոռի-Փամբակ – Բորչալու հատվածում գոյություն ունեցող սահմանային վեճերի մասին։ Անդրերկրկոմի նախագահությունը Վրաստանի կոմկուսի կենտկոմին հանձնարարեց ընթացք տալ բարձրացված հարցերին։ Կամ՝ 1926 թ. մարտին ՀՍԽՀ հողժողկոմատը Անդրդաշնության մարմինների առջև հարց բարձրացրեց, որպեսզի հայ գյուղացիներին թույլատրվի օգտվելու սահմանամերձ անտառներից, սակայն Անդրկենտգործկոմի նախագահությունն այդ առաջարկը մերժեց։ Այս փաստերը ներկայացնելուց հետո պատմաբան Ա. Սահակյանը եզրակացնում է, որ սահմանագծային հարցերում ՀՍԽՀ հողժողկոմատի դիմում-բողոքները «լավագույն դեպքում Հայաստանի շրջանակներից այն կողմ չէր անցնում»³։

1920-ականների երկրորդ կեսին ձգձգումներով էր ընթանում Խորհրդային Վրաստանի Բորչալուի և Խորհրդային Հայաստանի Լոռի-Փամբակի գավառների միջև ընթացող սահմանագծային վեճը, որը հիմնականում պայմանավորված էր արդեն վերը հիշատակված Լոք-Լալվարի լեռնաշղթայի հատվածում սահմանագծման դժվարություններով։ Վիճելի համարվող տարածքը կազմում էր շուրջ 21.000 դեսյատին, որի սահմաններում գտնվում էր 12 գյուղ։ Խնդիրը կարգավորելու նպատակով 1926 թ. մայիսին Անդրդաշնության Կենտգործկոմի հողային հանձնաժողովը ՀՍԽՀ-ի և ՎՍԽՀ-ի հողագործության ժողկոմատների ներկայացուցիչների մասնակցությամբ վիճահարույց տարածքի և նրան հարակից շրջանների ուսումնասիրություն կատարեց՝ պարզելու Լոռի-Փամբակի և Բորչալուի յուրաքանչյուր բնակչի՝ առնչությունը վիճահարույց տարածքին։ Նշյալ գավառների վարչատնտեսական սահմանները որոշելու նպատակով ստեղծվեց հատուկ

¹ 1 դեսյատինը հավասար է 1.09 հեկտարի։

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, գ. 232, թ. 3 և շրջ., 6 և շրջ., 8:

³ Սահակյան Ա. Լ., նշվ. աշխ., էջ 185։

հանձնաժողով՝ վրացի գ. Ստուրուայի ղեկավարությամբ: Հանձնաժողովում ընդգրկվեցին նաև ՀՄԽՀ և ՎՍԽՀ հողագործության ժողկոմները և նշված գավառների գործկոմների ներկայացուցիչները: Անդրդաշնության կենտգործկոմի նախագահությունը 1927 թ. սեպտեմբերի 19-ին որոշեց Ստուրուայի փոխարեն հանձնաժողովի ղեկավար նշանակել ադրբեջանցի Մ.-Զ. Բաղիրովին: Նրան հանձնարարվեց աշխատանքներն ավարտել մեկամսյա ժամկետում, սակայն ապարդյուն. մոտեցող ձմռան պատճառով աշխատանքները հետաձգվեցին մինչև 1928 թ. գարուն¹:

Նշենք, որ Անդրկենտգործկոմի Հողային հանձնաժողովի աշխատանքի արդյունքում 1927 թ. օգոստոսի 13-ին ՀՄԽՀ-ի և ՎՍԽՀ-ի ներկայացուցիչների միջև համաձայնություն կայացվեց Լենինականի և Ախալքալաքի գավառների ամբողջ երկարությամբ (53,5 կմ) վարչատնտեսական սահմաններ անցկացնել: Մինչև իսկ 56 սահմանային նշաններ մատակարարվեցին՝ սահմանագծում տեղադրելու համար²: Ի դեպ, 1928 թ. ընթացքում հողային վեճ գոյություն ուներ նաև Լոռի-Փամբակի գավառի Զիլիզա և Բորչալուի Օփրեթ գյուղերի միջև³: 1920-ականների կեսերին որոշ ժամանակ Զիլիզան գտնվել էր ՎՍԽՀ կազմում, այնուհետև անցավ ՀՄԽՀ-ին:

Չնայած Բորչալուի և Լոռու-Փամբակի գավառների վարչատնտեսական սահմանները որոշող հանձնաժողովի ստացած հրահանգ-հանձնարարականներին, այդուհանդերձ հարցը չէր կարգավորվում: Անդրդաշնության կենտգործկոմի փոքր նախագահության 1928 թ. հունիսի 7-ի նիստում հանձնաժողովին հանձնարարվեց մինչև հուլիսի վերջն ավարտել աշխատանքները⁴: Հուլիսի 16-ին հանձնաժողովի նախագահի պաշտոնում Ս. Բաղիրովին փոխարինեց Ս. Յաղուբովը (Բաղիրովի ղեկավարած հանձնաժողովը նոյնիսկ վիճելի համարվող տարածք չէր մեկնել): Վերջինին ևս Անդրկենտգործկոմը հանձնարարեց մինչև ամսվա վերջը ավարտել սահմանագծման աշխատանքները⁵: Ի տարբերություն նախորդ դեպքերի՝ այս անգամ որոշ հաջողություն արձանագրվեց: Հանձնաժողովի 1928 թ. օգոստոսի 10-ի նիստի ընթացքում կողմերը (ՀՄԽՀ և ՎՍԽՀ հողագործության ժողկոմներ Ա. Երզնկյանը և Ս. Զուլեկին) սահմանագծման ընդհանուր սկզբունքների շուրջ համաձայնության եկան: Այդ նպատակով հանձնաժողովի աշխատակիցները անհրաժեշտ նյութեր նախապատրաստեցին՝ երկու գավառների սահմանագծում (48 կմ) հստակություն մտցնելու համար: Այդուհանդերձ, ի հայտ եկան վիճահարույց 7 հողակտորներ Բորչալուի գավառի 5 և Լոռի-Փամբակի գավառի համապատասխան 5 գյուղերի միջև՝

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, գ. 3, զ. 703, թ. 203:

² Տե՛ս ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, զ. 2270, թ. 21:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, զ. 267, թ. 21:

⁴ Տե՛ս նոյն տեղում, գ. 2, զ. 1407, թ. 66:

⁵ Տե՛ս նոյն տեղում, թ. 80:

ընդհանուր 1037,0 հեկտարի չափով: Նկատի ունենալով, որ քննարկումը շոշափում է բոլոր սահմանային վիճելի հարցերը, Անդրկենտգործկոմի նախագահությունը 1928 թ. նոյեմբերի 10-ի նիստում հանրապետությունների հողժողկոմներին առաջարկվեց երեքամյա ժամկետում վերանայել սահմանային բոլոր վիճելի հարցերը¹:

Հաջորդ օրերին Լոռի-Փամբակի և Բորչալուի սահմանային տեղանքում ուսումնասիրություններ անցկացրեց Անդրկենտգործկոմի համապատասխան հանձնաժողովը՝ հողաչափ Յա. Լիիցկու գլխավորությամբ: Հանձնաժողովը տեղական բնակչության ներկայացուցիչների մասնակցությամբ օգոստոսի 21-27-ը մանրամասն կոորդինատներով որոշել է գավառների սահմանագիծը: Այն սկսվում էր Լեզի-դաղ լեռից և շարունակվում մինչև Լոքսի լեռնանցքը: Տեղական ներկայացուցիչների մասնակցությամբ այդ առթիվ համապատասխան ակտ կազմվեց: Սակայն ոչ բոլոր տարածքներում էր հնարավոր եղել վերջնական որոշման հանգել: Մասնավորապես Շահնազար գյուղի հողամասերին առնչվող վեճի առնչությամբ Լիիցկին առաջարկել էր տարածքը բաժանել երկու մասի. արևելյան մասը՝ Վրաստանին, արևմտյանը՝ Հայաստանին²:

Անդրկենտգործկոմի հանձնաժողովը 1929 թ. հունվարի 29-ից մինչև փետրվարի 2-ը ընկած ժամանակահատվածում քննարկեց և որոշում կայացրեց Բորչալու – Լոռի-Փամբակի և Լենինական – Ախալքալաքի գավառների ամբողջ երկարությամբ վարչատնտեսական սահմաններ հաստատել: Հանձնաժողովի աշխատանքները վավերացվեցին Անդրկովկասյան Դաշնության Կենտգործկոմի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում³:

Փետրվարի 18-ին Անդրկենտգործկոմի նախագահությունը մանրամասն քննության առավ դաշնության մեջ մտնող հանրապետությունների սահմանային գավառների միջև գոյություն ունեցող հողային և անտառային վեճերի մասին հարցը: Օրակարգի խնդիրներից էր «ՀՍԽՀ Լոռի-Փամբակի և ՎՍԽՀ Բորչալուի գավառների միջև եղած ողջ տարածքում վարչատնտեսական սահմանի հաստատման մասին» հարցը: Ըստ այդմ՝ հաստատվեց ՀՍԽՀ և ՎՍԽՀ հողագործության ժողկոմներ Ա. Երզնկյանի և Ս. Զուրելիի միջև 1928 թ. օգոստոսի 10-ին կայացած համաձայնությունը գավառների սահմանագծման մասին: Վրացական կողմի պահանջով ամրագրվում էր, որ ՀՍԽՀ տարածքում մնացող և ջրապաշտպան նշանակություն ունեցող անտառի նկատմամբ պետք է հատուկ հսկողություն սահմանվի: Երկու ժողկոմներին հանձնարարվեց կայացված համաձայնության հիման վրա լուծել բոլոր վիճելի հարցերը

¹ Տե՛ս ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, գ. 2270, թ. 22:

² Տե՛ս նոյն տեղում, գ. 2266, թ. 38-48:

³ Տե՛ս նոյն տեղում, գ. 2270, թ. 23:

և մանրամասն նկարագրել նշված գավառների ամբողջ սահմանագիծը, որն այնուհետև ներկայացվելու էր Անդրդաշնության հանձնաժողովի հաստատմանը:

Նիստում քննարկվեց նաև «ՀՍԽՀ Լենինականի և ՎՍԽՀ Ախալքալաքի գավառների միջև վարչատնտեսական սահմանի անցկացման մասին» հարցը: Մերժվեց հայկական կողմի խնդրանքը՝ 80 դեսյատին հողատարածք միացնել Լենինականի Դարաքյոյ գյուղին: Մասնակի փոփոխություններով հաստատվեց 1927 թ. օգոստոսի 13-ին Լենինականի և Ախալքալաքի գավառների միջև վարչատնտեսական սահմանի անցկացման մասին համաձայնության ակտը¹.

Արդեն 1929 թ. ապրիլի 29-ին ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահությունը (նախագահ Ս. Կասյանի և քարտուղար Ռ. Ղաշտոյանի ստորագրությամբ) հատուկ շրջաբերական ուղղեց հանրապետության «բոլոր գավառներին», ուր պարզաբանում էր «ԱՍԴԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների մի քանի սահմանամերձ գավառների բնակչության հողային և անտառային վեճերի մասին» որոշման հանգամանքները: Տեղեկացվում էր, որ նշյալ որոշումը տեղերում կիրառելու պարտականությունը դրվում է Անդրկենտգործկոմին առընթեր հողային և անտառային վեճերը քննող հանձնաժողովի վրա, որը պետք է իր աշխատանքներն ավարտեր 1929 թ. աշնանից ոչ ուշ: Տեղեկացվում էր, որ Անդրդաշնության կազմում գտնվող հանրապետությունների սահմանամերձ գավառների (այդ թվում՝ Ախալքալաքի և Լոռի-Փամբակի) միջև մինչ այդ «գոյություն ունեցող հողային և անտառային վեճերի լուծումը համարվում է վերջնական»: Շեշտվում էր, որ որոշումն ընդունվել է կողմերի լիազորված ներկայացուցիչների «միաձայն որոշմամբ, որոնք խորհրդակցությանը մասնակցել են Ադրբեյջանի, Վրաստանի և Հայաստանի ՍԽՀ կենտգործկոմի ուժով կոմիսարիների նախագահների գլխավորությամբ»: Վերջում գավառներին հրահանգվում էր ամեն կերպ աջակցել Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովին: Զանցառուները ենթարկվելու էին քրեական պատասխանատվությանը²:

Իսկ արդեն 1929 թ. սեպտեմբերի 2-ին Անդրկովկասյան Դաշնության կենտգործկոմի նախագահությունը քննարկեց «ՎՍԽՀ Բորչալուի և ՀՍԽՀ Լոռի-Փամբակի գավառների միջև հողային և անտառային վեճերի մասին» հարցը: Կայացված որոշմամբ երկու գավառների միջև նոր սահմանագիծ հաստատվեց: ի վեց հայկական շահերի «որոշվեց» նաև շուրջ 950 դեսյատին տարածք զբաղեցնող, վիճելի համարվող 7 հողատարածքի ձակատագիրը: Դրանցից 5-ը (879,12 դեսյատին տարածքով) միացվեց Բորչալուի գավառին, իսկ 2 հողատարածք՝ Լոռի-Փամբակին

¹ ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 81 և շրջ. (Լենինականի և Ախալքալաքի գավառների սահմանագիծը՝ մանրամասն կողրդինատներով):
² Տե՛ս նոյն տեղում, թ. 12 և շրջ.:

(70,32 դեսյատին): Այս համաձայնությամբ ՎՍԽՀ Բորչալուի գավառից (իրականում՝ Հյուսիսային Լոռուց) ՀՍԽՀ-ին անցան Աղքյորփի, Չանախչի, Բրդաձոր գյուղերը¹:

Վերջնական համարվելու միտում ունեցող այս որոշումները ևս չիրականացան: Անդրդաշնության Կենտգործկոմի 1933 թ. մայիսի 4-ի որոշմամբ Սիլվեստր Թողրիայի ղեկավարությամբ հատուկ հանձնաժողով ստեղծվեց՝ ՎՍԽՀ Բորչալուի և ՀՍԽՀ Ղարաքիլիսայի շրջանների միջև սահմանները հստակեցնելու նպատակով:

ՎՍԽՀ Բորչալուի և ՀՍԽՀ Ալավերդու շրջանների միջև սահմանագիծը հետազոտող հանձնաժողովի ղեկավարն էր Անդրդաշնության հողժողկոմատի կոլեգիայի անդամ Ղահրամանովը: Հանձնաժողովում ընդգրկվել էին ներկայացուցիչներ Վրաստանի և Հայաստանի հողժողկոմատներից, ինչպես նաև Բորչալուի, Ալավերդու շրջաններից ու Սաղախլոյի գյուղական խորհրդից: Հանձնաժողովը մայիսի 11-ին տեղում անցավ աշխատանքի: Անդրկենտգործկոմի 1929 թ. սեպտեմբերի 2-ի որոշմամբ ՀՍԽՀ-ի և ՎՍԽՀ-ի միջև հաստատված սահմանագիծը որոշվում էր բնօրինակ պահանջետներով, տեղում հայտնաբերված բարձունքներով և վիճելի մասերի այլ բնութագրերով: Հանձնաժողովը գտավ, որ իրականությանը չի համապատասխանում հայկական կողմի պնդումը, թե Սաղախլոյի բնակիչները Հայաստանի տարածքում հողատարածքներ են օավթել²:

Հաջորդ խնդիրը կապված էր Անդրկենտգործկոմի 1929 թ. Հայաստանին անցած Աղքյորփի, Չանախչի և Բրդաձոր գյուղերի պատկանելության հետ: Մինչ այդ գյուղերը ՎՍԽՀ Բորչալուի գավառործկոմի ենթակայության ներքո էին: Հաշվի առնելով այս հանգամանքը, նաև տնտեսական կապերը՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ «նշված գյուղերը պետք է կապված լինեն Բորչալուի շրջանի հետ»: Որպես փաստարկ նշվում էր, թե «գյուղերի ուսումնասիրման ընթացքում վերջիններիս բնակիչները նույնպես հայտարարեցին, որ անհրաժեշտ է վարչականորեն ենթակվել Բորչալուի շրջանին, թեև բնակչության կազմը հայկական է»: Խնդիրն այն էր, որ նշված երեք գյուղերի հողամասերն ու անտառները գտնվում էին Ալավերդու շրջգործկոմի և Ղարաքիլիսայի անտառտնտեսության ենթակայության ներքո: Այս տեսակետից տրամաբանական էր գյուղերը ՀՍԽՀ կազմում թողնելը: Իր «առաջարկներում» հանձնաժողովն այնքան հեռու գնաց, որ մինչև իսկ «նպատակահարմար» գտավ առաջարկել. «Փոփոխել հանրապետական սահմանն այնպես, որպեսզի փաստացի հողօգտագործումն անցնի Վրաստանի տարածքին»³:

Ղահրամանովի ղեկավարած հանձնաժողովի առաջարկները քննարկվեցին Անդրդաշնության կենտգործկոմի փոքր նախագահության 1933 թ. հունիսի 17-ի

¹ Տե՛ս նոյն տեղում, ց. 2, գ. 199, թ. 13-15, գ. 1412, թ. 87-89: Այս որոշումը հետագայում՝ Անդրկենտգործկոմի նախագահության 1935 թ. մարտի 19-ի որոշմամբ, մասնակի փոփոխության ենթակվեց (ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 681, թ. 85 և շրջ.):

² Տե՛ս ԿԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 3341, թ. 18:

³ Նոյն տեղում, թ. 18-19:

նիստում և հավանության արժանացան: Որոշման վերջնական խմբագրումը կատարելու համար ստեղծվեց հանձնաժողով հետևյալ կազմով՝ Ա. Թոդրիա, Ա. Ղոգաղով, Դ. Բունիաթզադե¹: Ա. Թոդրիայի ղեկավարությամբ հանձնաժողովի 1933 թ. հունիսի 26-ի նիստում որոշում կայացվեց Խորհրդային Վրաստանին փոխանցել Զանախչի, Աղքյորփի և Բրդաձոր գյուղերը: «Անհապաղ եզրակացություն տալու համար» հարցն ուղարկվեց Հայաստանի և Վրաստանի Կենտգործկոմների քննարկմանը: Թիֆլիսից եկած առաջարկը որևէ ընդդիմության չարժանացավ Խորհրդային Հայաստանի իշխանությունների կողմից: Միայն հանրապետության Կենտգործկոմին ներկայացրած կարծիքում ՀՍԽՀ հողագործության ժողկոմատը վերապահություն էր արել, որ «նոր սահմանների գծումը կատարելիս չխախտվի անտառտնտեսության միասնությունը ու չտուժեն այդ տնտեսության շահերը», սահմանները անցկացնել նշյալ գյուղերի շնչարաժին հողերի սահմանագիծը և ժողկոմատի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ²:

Անդրկենտգործկոմի փոքր նախագահության 1934 թ. փետրվարի 13-ի նիստում, հաշվի առնելով, որ ստացվել է Հայաստանի և Վրաստանի «շահագրգիռ Կենտգործկոմների հավանությունը», որոշվեց. «ա) անհրաժեշտ համարել ներկա վարչատարածքային սահմաններով Աղքյորփի, Բրդաձոր և Զանախչի գյուղերը փոխանցել ՎՍԽՀ-ի կազմ, բ) փոփոխել հանրապետական սահմանը Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև ..., գ) նշյած գյուղերի բնակչության հետագայում թույլատրել օգտվելու ՀՍԽՀ-ի տարածքի անտառներից՝ երկարաժամկետ վարձակալության հիմունքներով»³:

Ի կատարումն այս որոշման՝ արդեն օգոստոսի 14-16-ին Անդրկենտգործկոմի հանձնաժողովը Ա. Շահվերդովի նախագահությամբ և Անդրդաշնության, ՀՍԽՀ-ի, ՎՍԽՀ-ի հողագործության ժողկոմատների, անտառտնտեսությունների, Ալավերդու, Բորչալուի շրջգործկոմների, գյուղերի կոլտնտեսությունների ներկայացուցիչների մասնակցությամբ տեղերում համապատասխան ակտեր կազմեց՝ նշյալ գյուղերը Խորհրդային Վրաստանի կազմ փոխանցելու մասին և մանրամասն կոորդինատներով հաստատվեց⁴: Օգոստոսի 16-ին Բորչալուի և Ալավերդու շրջանների միջև սահմանագծման աշխատանքներ կատարվեցին: Այդ թվում՝ «Ճշգրտվեց» անտառով անցնող սահմանագիծը, որով սահմանն ի վեհական ՀՍԽՀ-ի փոփոխվեց (մասնավորապես անտառաշերտի հատվածում): Այս առթիվ ՀՍԽՀ անտառտնտեսության ներկայացուցիչ Ծովիկյանը բողոք ներկայացրեց, ինչը, սակայն, անտեսվեց⁵: Պետք է փաստել, որ

¹ Տե՛ս նոյն տեղում, թ. 20:

² Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 2, զ. 232, թ. 17-22, ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, զ. 3341, թ. 21:

³ ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, զ. 3341, թ. 30, ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, զ. 681, թ. 28:

⁴ Տե՛ս ԿԱԱ, ֆ. 607, գ. 1, զ. 3341, թ. 53-55 շրջ.:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, զ. 681, թ. 7-8:

ՀՍԽՀ շահերին հակասող սույն որոշմանը հայկական կողմի ներկայացուցչի ընդունմությունը բացառիկ օրինակներից է:

Նշենք, որ Աղջորփիից, Զանախչիից և Բրդաձորից հետո վրացիները հավակնություններ ներկայացրեցին Լոռու Պրիվոլոյե գյուղի մերձակայքում գտնվող հայկական միջնադարյան Խուճապի վանքի նկատմամբ (այն գտնվում է Աղջորփիից 1-1,5 կմ հեռավորության վրա): ՎՍԽՀ Բորչալուի շրջանի ղեկավարությունը մտադիր էր տարածքն օգտագործել իբրև հանգստյան գոտի: Հիմք ընդունելով վրացական խնդրանքը՝ Անդրկենտգործկոմի փոքր նախագահությունը 1934 թ. սեպտեմբերի 16-ի նիստում որոշում կայացրեց «Խնդրել Հայկենտգործկոմին՝ քննարկել վանքի փոխանցման հնարավորությունը»: Որոշակի ծգծումից հետո ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահությունը 1936 թ. մարտի 14-ի նիստում աննպատակահարմար համարեց վանքի տարածքի փոխանցումը Աղջորփիի կողմանը, «քանի որ վանքի տարածքը փոխանցված է Պրիվոլոյե գյուղի կողմանը, որտեղ կազմակերպվում են խոզաբուժական և մեղվաբուժական ֆերմաներ»: Հարցը քննարկվում է Անդրկենտգործկոմի փոքր նախագահության 1936 թ. մարտի 25-ի նիստում, որտեղ որոշվում է խնդիրը փակված համարել¹: Սա սահմանագծային հարցում Անդրդաշնության Կենտգործկոմի վերջին որոշումներից էր:

1936 թ. դեկտեմբերի 6-ին ընդունված ԽՍՀՄ Սահմանադրությամբ և 1937 թ. փետրվարին տեղի ունեցած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեյջանի խորհուրդների արտակարգ համագումարների որոշումների համաձայն՝ լուծարվեց Անդրկովկասյան Դաշնությունը: Այսուհետ Խորհրդային Հայաստանը, Խորհրդային Վրաստանը և Խորհրդային Ադրբեյջանը հանդես էին գալու որպես առանձին հանրապետություններ: Ուստի կարևոր էր, որ Անդրդաշնության գոյության ընթացքում հիմնականում որոշվեցին հանրապետությունների միջային սահմանագծերը:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին հայ-վրացական տարածքային-սահմանային խնդիրների կարգավորման ընթացքում հայկական զգալի տարածքներ (պատմական Զավախք, Լոռու հյուսիսային մասը) հայտնվեցին Խորհրդային Վրաստանի կազմում: Լոռու մեկ մասը՝ նախկին չեզոք գոտին, մնաց Խորհրդային Հայաստանի կազմում, սակայն հայ-վրացական սահմանի այս հատվածում Խորհրդային Հայաստանը հետագայում ևս տարածքային որոշ կորուստներ ունեցավ: Փաստենք, որ Երկու հարեւան հանրապետությունների միջև վերջնական սահմանագծի հաստատումը խորհրդային տարիներին այդպես էլ ավարտին չհասավ. միջային սահմանի ճշգրտումները շարունակվում է մինչ օրս:

¹ Տե՛ս ՎԱԱ, ֆ. 607, գ. 1, գ. 3341, թ. 61, 85 և շրջ.:

Карен Хачатрян, Амо Сукиасян, Процесс урегулирования армяно-грузинских территориально-приграничных проблем в 1920-1930-ых годах – В результате осуществления в 1920-1930-ых годах армяно-грузинского территориального разграничения, значительные армянские территории (исторический Джавахк, северная часть Лори) оказались в составе Советской Грузии. Часть Лори, бывшая нейтральная зона, осталась в составе Советской Армении. Однако на этом участке армяно-грузинской границы в дальнейшем республика имела некоторые территориальные потери. Отметим, что процесс окончательного установления границы между двумя соседними республиками в годы Закфедерации остался незавершенным, определение и корректировка межгосударственной границы продолжается и по сей день.

Karen Khachatryan, Hamo Sukiasyan, The process of settlement of the Armenian-Georgian territorial-border problems in 1920-1930 – As a result of the process of settlement of the Armenian-Georgian territorial-border problems in 1920-1930 a substantial part of Armenian territories (historical Javakhk, Northern Lori) became a part of Soviet Georgia. Despite the fact that a part of Lori, the former Neutral zone, remained part of Soviet Armenia, in this section of the Armenian-Georgian border Soviet Armenia subsequently had some territorial losses too. It should be noted that the establishment of a final border between the two neighboring republics during the Transcaucasian Federation did not reach the end, and the process of validation of interstate border continues to this day.

Կարեն Խաչատրյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, <<ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն:

Համո Սուկիասյան – պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, <<ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող: